600.0051.01.03.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 մարտի 2017 թվականի №51Ա
քաղ. Երևան

«ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԼԵՌ ԷՔՍ ՀԷԿ-2» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՀԻԴՐՈԱԳՐԵԳԱՏԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը և 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի հուլիսի 14-ի №365Ն որոշմամբ հաստատված էներգետիկայի բնագավառում ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգը և հաշվի առնելով «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի հունվարի 25-ի №17/01-002 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Լեռ էքս ՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի (այսուհետ՝ Կայան) հիդրոագրեգատի փոխարինման ներդրումային ծրագրին՝ հիսունվեց միլիոն վեց հարյուր հազար դրամ ծավալով՝ առանց ավելացված արժեքի հարկի:
2. «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝
   1) սույն որոշման 1-ին կետում նշված ներդրումների արդյունքում ստեղծված ակտիվների նկատմամբ կկիրառվի 15 տոկոս շահութաբերության նորմա՝ մինչև հարկումը.
   2) սույն որոշման 1-ին կետում նշված ներդրումային ծրագրի իրականացումից հետո, հետագա սակագների սահմանման (վերանայման) ժամանակ, Կայանի

էլեկտրական էներգիայի տարեկան արտադրանքը կընդունվի 2,045 մլն կՎտժ-ից ոչ պակաս.

3) ներդրումային ծրագրով նախատեսված աշխատանքները կատարելուց հետո, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի նոյեմբերի 30-ի №309Ա որոշմամբ հաստատված №0226 լիցենզիայի պայմաններում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով, անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություններ անցած Կայանի նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտը, ավարտական ակտը (շահագործման թույլտվություն) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ էներգատեղակայանքի գործարկման եզրակացությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
1 մարտի 2017թ.
ժամը 16[00]